

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍՈՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-958-03.05.2021-SՀ-011/0), «ԼԻՑԵՆԶԻԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-958¹-03.05.2021-SՀ-011/0), «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-958²-03.05.2021-SՀ-011/0) ԵՎ «ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-958³-03.05.2021-SՀ-011/0) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ Ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով	«Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ	Առաջարկվում է «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվող՝ Ավտոմոբիլների ձեռք բերման թրեյդ-ին առևտրի լիցենզիայի համար պետական տուրքի դրույքաչափը վերանայել և 2022 թվականի համար սահմանել 1 մլն. դրամ, իսկ հետագա տարիների համար՝ 2 մլն. դրամ:	Ընդունվել է: «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է
2.	ՀՀ Ազգային ժողովի նախագահի տեղակալ Ալեն Սիմոնյան	«Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ	Առաջարկվում է «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվող պետական տուրքը տարեկան 2 մլն. դրամի փոխարեն սահմանել 2 հարյուր հազար դրամի չափով:	Ընդունվել է մասնակի: 1. Կառավարության առաջարկությամբ նախագծերի փաթեթում ներառված՝ «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով	Չի ընդունվել

				առաջարկվել է հստակեցնել Trade in գործիքի կիրառության շրջանակը, ինչի արդյունքում կստացվի, որ ավտոարտադրողի պաշտոնական ներկայացուցիչ համարվող, սակայն Trade in գործիքի կիրառությամբ չգբաղվող տնտեսավարող սուբյեկտներն ընդհանրապես ազատվում են լիցենզավորման ու պետական տուրքի վճարման պարտականություններից: Մյուս կողմից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ համակարգը նոր է ներդրվում, ինչի հետևանքով դժվար է ներկա պահին գնահատել համակարգի արդյունավետությունը՝ Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի առաջարկության համակարգի ներդրման առաջին տարվա համար պետական տուրքի դրույթաչափը երկու անգամ կրճատվել է:	
3.	Կառավարություն		Trade in գործիքի կիրառության շրջանակը հստակեցնելու, դրանով իսկ նախագծերով առաջարկվող հարկային արտոնյալ կարգավորումների կիրառության հասցեականությունն ապահովելու, ինչպես նաև ավտոարտադրողի պաշտոնական ներկայացուցիչ համարվող, սակայն Trade in գործիքի կիրառությամբ չգբաղվող տնտեսավարող սուբյեկտներին լիցենզավորման ու պետական տուրքի վճարման պարտականություններով	Ընդունվել է: Փաթեթը համալրվել է «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով:	Ընդունվել է:

			անհարկի չծանրաբեռնելու նպատակով՝ առաջարկվում է փաթեթում ներառել նաև «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, որով առաջարկվում է սահմանել «Ավտոտրանսպորտային միջոցի (այդ թվում՝ գյուղատնտեսական տեխնիկայի) ձեռք բերման Թրեյդ-ին առևտուր» հասկացությունը:		
4.	Կառավարություն		Վերոնշյալ առաջարկությամբ պայմանավորված՝ առաջարկվում է համապատասխան ճշգրտումներ կատարել նաև քննարկման ներկայացված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերում:	Ընդունվել է: Նշյալ նախագծերում կատարվել են համապատասխան ճշգրտումներ:	Ընդունվել է: